ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանին

Գավառի քաղաքացիական երիտասարդական կենտրոնի
համակարգող, ՀՀ քաղաքացի Նարեկ Մուրադյանից

Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Գավառ, Սայադյան փ. 2/1, Հեռ.098328883

Էլ. Հասցե՝ gavarcenter@gmail.com

3. դեկտեմբերի, 2016թ.

Տեղեկության հարցում-1/2016

Հարգելի պարոն Գրիգորյան,

Առաջնորդվելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի բոլոր այն նիստերի արձանագրությունների և որոշումների պատճենները, որոնք գումարվել են այդ խորհրդի ստեղծումից ի վեր:
2. Արդյո՞ք որևէ կերպ հրապարակվել են վերոհիշյալ արձանագրությունները և որոշումները, եթե այո, ապա խնդրում եմ ինձ տրամադրել հրապարակման հասցեները կամ համացանցային հղումները:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի կանոնադրության կամ աշխատակարգի պատճենը, եթե կա այդպիսի փաստաթուղթ:
4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի գործող կազմը, և՝ անդամներից յուրաքանչյուրի ներգրավման մեխանիզմը: Եթե անդամների ներգրավման մեխանիզմը սահմանված է որևէ իրավական ակտով, խնդրում եմ ինձ տրամադրել այդ իրավական ակտի պատճենը:

Խնդրում եմ հարցրած տեղեկությունները տրամադրել, դրանք ուղարկելով իմ հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ gavarcenter@gmail.com

Տեղեկություն հարցնող՝

Նարեկ Մուրադյանից ________

Գեղարքունիքի մարզպետարան
ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ Է
Մուտք թիվ 9489-16
06. 12 2016թ